—Կ. Պօլսի գրեթէ բոլոր ազգային հաստատութիւնների անդամները ու երեսփոխանները—ընտրուել են արդէն: Ուսումնական նորընտիր խորհրդոյ անդամներն են՝ պ. պ. Ռ. Պէրպէրեան, Յ. Ն. Մօստիչեան, Լ. Փաշայեան, Մ. Կիւրճեան, պ. Փափազեան, Վ. Մանուկեան եւ Յ. էֆ. Ըսայեան:

—Չորեքշաբթի, փետ. 8-ին Խառն ժողովոյ մէջ կարդացուել է Վեհափառ Կաթողիկոսի նամակը, որով Նորին Օծութիւնն ցաւ է յայտնում Սսոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսին մահուան առթիւ և պատուիրում է. որպէս զի անհովիւ չմնայ այդ նշանաւոր վիճակը, անյապաղ ձեռնամուխ լինել յաջորդի ընտրութեան:

---

Կ. Պօլսոյ Պատրիարքարանի կողմից գաւառները շրջաբերական է ուղարկուած, որի իմաստը այս է. Պօլսոյ և գաւառներու մէջ սարկաւագի ձեռնադրութեան համար պէտք եղած հրամանը տրուում է Պօլսոյ կրօնական ժողովի կողմից: Բայց Սիսի, Աղթամարի կաթողիկոսները ու Երուսաղէմի պատրիարքը իրաւունք ունեն առանց Պօլսից հրաման առնելու իրենց հոգեւոր իրաւասութեան տակ գտնուած վիճակների և կամ վանքերի համար ձեռնադրութիւններ կատարել: Սակայն պատահում է, որ եպիսկոպոսները սարկաւագ և վարդապետ են ձեռնադրում առանց հրաման ստանալու այն իշխանութիւնից, որից կախումն ունեն: Շրջաբերականները հրաւիրում են առաջնորդներին և վանահայրերին, որ այս եկեղեցական կարգաւորութեան հաւատարմութեամբ հպատակեն:

---

Կ. Պօլսի Հայոց Խառն ժողովը իւր փետրուարի 8-ին արած նիստում ուշադրութեան է առել Թափուր մնացած վիճակների հովուութեան խնդիրը և Կրօնական ու Քաղաքական ժողովներին առաջարկել է, որ նախաքննիչ մասնախումբերին յանձնարարեն՝ հաւաքական նըստում՝ ուսումնասիրել դրա պատճառները:

Կրօնական ժողովն իւր առաջին նստում վճռել է խնդրել Վեհ. Հայրապետի օրհնութիւնն իւր ձեռնարկութիւնների սկզբում: Գովելի է կրօնական ժողովի այս ընթացքը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.
1. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ . Կ. Ա. . 43.
2. ՔԱՐՈԶԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ . Կ. Ա. . 44.
3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . Ն. Ք. . 48.
4. ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ Վանական . . . . 51.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.
5. ԱՌԱԾՆԵՐ . . . . Ս. Հայկունի . . 54.
6. ՄԻ ՎՀԱՏԻՐ (Բանաստ.) } Յ. Յովհաննիսեան 55.
7. ՊԸՏԷՕՖԻՒՑ (Բանաստ.)
8. ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ . . Ն. Քարամեանց 55.
9. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ I. ՀԱՄԼԷՏ . Յ. Յ. . 57.
10. II. ՀԱՅ ԼՐԱԳ. ՊԱՏՄ. Գ. Լեւոնեան 59.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.
11. ՆՈՐ ՆԱԽԻՋ. ՈՒՍՈՒՄՆ. ԳՈՐԾԸ Ե. Շ. . 63.
12. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ. . . . . . . . . . 67.
13 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . . . . 67.

ԱԶԳԱՅԻՆ.
14. ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՊԱՐԳԵՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆ . . . . . . Խմբագ. . . 68.
15 ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . 70
1. ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . . .
2. ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ. . . . . . .
3. ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄ. . . . . . .
4. ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ. . . . . . .
5. ՑԱՃԿԱՀԱՅՔ. . . . . . .

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ . . . . . . .
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . . .

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ.

Արարատի հ. Գործակալներին

Խմբագրութիւնն խնդրում է արժանապատիւ գործակալներից Արարատի համարները ըստ կարելւոյն փութով հասցնել յարգելի բաժանորդներին, որպէս զի խմբագրութիւնս ըստիպուած չը լինի զանցառուների ցուցակը տըպել:

Ս–ղ–տ–տ–րէ–. Պ. Ս. Ջ. Ձեր յանձնարարութիւնները կատարեցինք: